

Կ Ա Պ Ո Ւ Յ Տ Հ Ա Ձ

ԻՆՋՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁՈՎ

Կապույտ հազը մանկական վարակիչ հիվանդությունն է: Ամենից շատ հիվանդանում են մինչև 5 տարեկան յերեխաները: Մեծերը կապույտ հազով չարազանց հազվադեպ են հիվանդանում:

Կապույտ հազը, ինչպես և մյուս բոլոր վարակիչ հիվանդությունները, առաջանում են միկրոօրգանիզմից:

Հազալույժ, փռչալույժ, բարձրաձայն խոսելով հիվանդն իր շուրջն և ափսոսում լորձի ու խորխի մանրադուլն կաթիլներ, փորոնց մեջ կապույտ հազի միկրոօրգանիզմ են դառնում: Ողի հետ ներշնչելով նրանց, առողջ յերեխան կարող է վարակվել կապույտ հազով:

Կապույտ հազի վարակելիությունը շատ մեծ է: Հաճախ բավական է կարճ ժամանակ լինել կապույտ հազով հիվանդի մոտ, փորպեսզի առողջ յերեխան վարակվի:

ԻՆՋՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Կապույտ հազով հիվանդանալը սովորաբար սկսվում է վարակվելուց 7—15 օր հետո, յերբեմն մի քիչ ավելի շուտ:

Հիվանդությունը միջին հաշվով տևում է 1 և կես — 2 ամիս, բայց յերբեմն ավելի յերկար: Հիվանդության ընթացքը կարելի յե բաժանել յերեք շրջանի:

Սկզբնական (կատարրային) շրջան: Այս շրջանը տևում է սովորաբար 12—14 օր, ծծկեր յերեխաների մոտ՝ ավելի կարճ: Յերեխան սկզբում իրեն յայլ է զգում: Հիվանդության միակ նշանն այդ շրջանում, սովորաբար, փտքրիկ չօր հազն է:

Մի քանի դեպքերում հազի հետ միաժամանակ փտքրիկ հարբուխ է ևկավում: Փտքրահասակ յերեխաները փռչալում են: Ձեռմատախճանը նորմալ է մնում, կամ աննշան բարձրանում է: Հազն առախճանաբար սփելի հասառ ու աներև և դառնում, յերևան է դալիս վորոշ ընդմիջումներով և, վոր առանձնապես բնորոշ է, դիչերներն է լինում:

Հազի նուպանրի շրջան (զղանգական շրջան): Սա հիվանդության ամենածանր ժամանակն է: Հազը սատականում է և անցնում կապույտ հազի համար տիպիկ նուպանրի, վորոնք յերբեմն փախոցով են ուղեկցվում: Հիվանդության թեթե դեպքերում օրական յիշում է 5—6 նուպա, յակ ծանր դեպքերում՝ մինչև 30 և ավելի: Յուրաքանչյուր նուպա բաղկացած է մի չարք հապային ցնցումներից, վորոնք միմյանց անցան արագ ևն հաջօրդում, վոր յերեխան չի կարողանում չունչ քա-

616-053.2

9-24



չել: Այնուհետև տեղի յե ունենում աղմկոտ, դժվարացած չնչում, վորից հետո հիվանդը նորից, ինչպես առում են «թուլանում և հազից»: Հազի նուպան վերջանում և թանձր, մածակա խորխի արտադրումով կամ փսխո- ցով: Ծանր դեպքերում նուպայի ժամանակ պատռվում են արյունատար անոթները և նրանցից՝ արյուն և հոսում: Այդպիսի արյունադեղումները օտարաբար վտանգավոր չեն և անհետ անցնում են:

Հանդիստ քնից զրկված, հազից ու փսխոցից թուլացած յերեխան նիհա- րում և, դառնում և դուրադուրի, թառամած: Յերեխայի տեսքը փոխվում և, դեմքը թեթև փքվում, կուպերն ուռչում են, աչքերը լցվում արյունով: Զղածգական չրջանը տևում և միջին հաշվով 3—6 շաբաթ:

Առողջանալու շրջան: Հազի նուպաները քանի գնում ավելի ուշ-ուշ են լինում և ավելի թույլ: Հազը դառնում և այնպես, ինչպես հիվանդության օկզրեական չրջանում: Յերեխան սկսում և կազդուրվել, տրամադրությունը լավանում և, քունն ու ակտիվությունը վերականգնվում են:

Վորքան ավելի փոքր և յերեխան, այնքան ավելի վտանգավոր և նրա համար կապույտ հազը: Կապույտ հազն ամենից ավելի դժվար են տանում ծծկեր յերեխաները: Նրանց համար նա առանձնապես վտանգավոր և:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁԻ ԺԱՄԱՆԱԿ

Կապույտ հազով հիվանդ յերեխան պետք և բժշկի հսկողության տակ գտնվի, վորովհետև այս հիվանդությունը շատ անգամ բարդությունների յե հասցնում:

Կապույտ հազը սովորաբար նորմալ ջերմաստիճանով և ընթանում: Այս հիվանդության ժամանակ ջերմաստիճանի զգալի բարձրացումը միշտ բարդության նշան և:

Կապույտ հազի ժամանակ ամենից ավելի հաճախ պատահող բարդու- թյունը թոքերի բորբոքումն և, վորն առանձնապես վտանգավոր և մինչև 2—3 տարեկան յերեխաների համար:

Տուբերկուլյոզով հիվանդ յերեխաների մոտ կապույտ հազը կարող և անբարենպաստ կերպով ազդել տուբերկուլյոզի ընթացքի վրա, յերբևմն առաջացնելով նրա սրումը:

ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁՈՎ ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ

Թարմ ողբ գլխավոր պայմանն և հիվանդության քարեհաջող ընթացքի համար: Այն յերեխան, վորը շատ ժամանակ և անցկացնում թարմ ողում, ավելի շուտ և առողջանում և հազվագեղ և բարդություններ առլիս:

Այն սենյակի ողը, վորտեղ յերեխան և գտնվում, միշտ պետք և մա- քուր և թարմ լինի: Ամռանը լուսամուտները պետք և բաց լինեն ամբողջ ողը, ձմռանն ու աշնանը սենյակը 20—30 րոպեյով պետք և ողափոխել ո- րական 2—3 անգամից վոչ պակաս: Առանձնապես կարևոր և սենյակն ողա- փոխել յերեխայի քնելուց առաջ: Յեթե սենյակի ողը մաքուր և, յերեխան ավելի շուտ և քնում, նրա քունը խորն և, չնչառությունը հանգիստ, հազը զգալիորեն ուշ-ուշ:

Ձմռանը կապույտ հազով հիվանդին դրսևանքի պետք և ուղարկել 2 և կես — 3 ժամով, իսկ ամռանն ու աշնանը՝ ամբողջ ողով: Կապույտ հազով հիվանդ ծծկեր յերեխաները նույնպես ամբողջ ողը պետք և բացողյա անց-

կացնեն, սակայն անպայման ստվերում: Զրոսանքի ժամանակ պետք և հե- տեկ, վորպեսզի առողջ յերեխաներ չմոտեման հիվանդներին:

Կապույտ հազով հիվանդի հազուտը պետք և ազատ լինի, վոր չնչի չնչառությունը:

Կապույտ հազով հիվանդին հատուկ դիետա հարկավոր չե, միայն պետք և խուսափել չոր ուտելիքից, վորը կարող և հազի նուպա առաջացնել (չոր թխվածք, կարկանդակ և այլն): Ծառ ցանկալի յե յերեխային ավելի շատ մրգեր ու բանջարեղեն տալ:

Հիվանդության յերրորդ-չորրորդ շաբաթվանից սկսվում և յերեխայի հազի ջղաձղական չրջանը և այդ ժամանակ լինում են փսխոցով ուղեկցվող հազի շատ հաճախակի և ուժեղ նուպաներ: Այդպիսի դեպքերում պետք և տալ մանրացրած կամ տրորած ուտելիք (կարտոֆիլի, խնձորի պյուրե, կիսիկներ և այլն) փոքրիկ բաժիններով, բայց հաճախ:

Յեթե հազի նուպան փսխոցի հետ սկսվեց ուտելու ժամանակ կամ ան- միջապես նրանից հետո, անհրաժեշտ և նուպայից հետո 10—15 րոպե անց նորից կերակրել յերեխային, վորպեսզի քաղցած չմնա: Առհասարակ ավելի լավ և յերեխային կերակրել նուպաներից հետո:

Փսխոցից հետո յերեխային պետք և տալ մի քանի կում քիչ քաղցրա- ցրած յեռացրած սառը ջուր, ավելացնելով պտուղների կամ մրգերի, ամե- նից ավելի լավ և, լիմոնի հում հյութ:

Փսխոցի ժամանակ որդանիդը շատ ջուր և կորցնում, այդ պատճառով անհրաժեշտ և յերեխային շատ հեղուկ տալ, սառը թեյ կամ յեռացրած ջուր խմացնել:

Կապույտ հազով հիվանդացած ծծկեր յերեխաներին հիվանդ ժամանակ կրծքից կտրել չի կարելի: սնվելով կրծքի կաթով, նրանք ավելի հեշտ են տանում հիվանդությունը:

Ամեն որ առավոտյան ու յերեկոյան պետք և չափել յերեխայի ջերմա- տիճանը: Զերմաստիճանը բարձրանալու դեպքում անհրաժեշտ և անմիջա- պես բժշկի կանչել, վորովհետև բարձրացած ջերմաստիճանը կարող և վո- րեն բարդության նշան լինել:

ԻՆՁՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՅԵՐԵԽԱՅԻՆ ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՅ

Յերեխային կապույտ հազից նախապահպանելու համար անհրաժեշտ և հեռու պահել նրան ամեն մի հազացող յերեխայից (վորը կարող և չճանաչ- ված կապույտ հազ ունենալ):

Կապույտ հազով հիվանդացած յերեխայի ծնողները պարտավոր են անմիջապես հայտնել մսուր, մանկապարտեզ կամ դպրոց, վոր իրենց յերե- փան հիվանդացել և կապույտ հազով:

Անհրաժեշտ և հիվանդ յերեխային առանձնացնել նույն բնակարանում ապրող մյուս յերեխաներից: Յեթե հիվանդ յերեխան անցնում և կամ նրան տանում են առողջ յերեխաների մոտով, անհրաժեշտ և նրա քիթն ու բերանը ծածկել թաշկինակով: Կապույտ հազով հիվանդ յերեխային չի կարելի բուժարան կամ կոնսուլտացիա տանել, վորովհետև նա այնտեղ կարող և վարակել ուրիշ յերեխաների: Հարկավոր և բժշկին տուն կանչել:

Այն սենյակը, վորտեղ գտնվում և կապույտ հազով հիվանդը, առող- ջանալուց հետո կարելի յե դեղինֆեկցիայի չնթարկել (չվարակալել): Հարկավոր և միայն բանալ դռներն ու լուսամուտները, լավ ողորդել:



խնամքով լվանալ սենյակն ու իրերը: Արևի և Թարմ ողի ազդեցության տակ կապույտ հագի միկրոբները շուտ վռչնչանում են:

К О К Л Ю Ш

Армгиз, Ереван, 1940 г.

Իւրգմ. Ավ. Շարիրյան, պատ. խմբագիր՝ Ս. Մկրտչյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան, սրբագրիչ՝ Վ. Ավագյան:
Դրավիտի լիազոր Ս—314. Պատվեր 473. Տիրաժ 3000. Հրատ. 5287.
Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65